ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Միջազգային համագործակցության բաժնի փորձագետ Կորյուն Սամսոնյանի կողմից 2022 թվականի օգոստոսից 10-ից 2023 թվականի փետրվարի 10-ն ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հանդիսանալով ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի միջազգային համագործակցության բաժնի փորձագետ՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- նախապատրաստել եմ Տեսչական մարմնի ղեկավարի արտասահմանյան այցերի, օտարերկրյա պետությունների լիազոր մարմինների պաշտոնատար անձանց, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումների, տեսակոնֆերանսների, քննարկումների բովանդակային մասը, կատարել արդյունքների վերլուծություն,
- կազմել եմ Տեսչական մարմնի ղեկավարի, նրա տեղակալների արտասահմանյան գործուղումների վերաբերյալ հաշվետվություններ,
- կազմել և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն և այլ պետական մարմիններ համաձայնության եմ ներկայացրել Տեսչական մարմնի աշխատակիցների գործուղման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթները, Տեսչական մարմնի՝ Դաբաղի վերահսկման եվրոպական հանձնաժողովին (EuFMD) անդամակցելու վերաբերյալ հիմնավորումը,
- «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով և աշխատանքային էլեկտրոնային փոստով բաժնի պետի հանձնարարությամբ

կազմել եմ գրություններ (արտաքին և ներքին շրջանառության), պատրաստել եմ պատասխան գրություններ ինչպես ռուսերեն, այնպես էլ անգլերեն լեզուներով՝ ուղղված Եվրասիական տնտեսական հանձնաժողովին, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազոր մարմիններին, տարբեր երկրների անասնաբուժության և սննդամթերքի անվտանգության ոլորտի լիազոր մարմիններին (Էկվադոր, Իսրայել, ԱՄՆ, Թաիլանդ, Մոնղոլիա, Վրաստան, Իրան, Պերու և այլն), ներմուծմամբ և արտահանմամբ զբաղվող տեղական և արտասահմանյան կազմակերպություններին,

- կատարել եմ Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջի թարգմանություն՝ հայերենից ռուսերեն և անգլերեն լեզուներով,
- բաժնի պետի հանձնարարությամբ կատարել եմ այլ ընթացիկ աշխատանքներ:

Միջազգային համագործակցության բաժնի փորձագետ՝ Կորյուն Սամսոնյան

13 փետրվարի 2023թ.